ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԿՄ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.04.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԿՄ-18/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ (ք. Երևան, Նար-Դոսի 122)**
2. **<<Տուրբոլայն>> ՍՊԸ (ք. Երևան, Շիրազի 39/1)**
3. **«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ (ք. Երևան, Գայի պ. 1/7)**
4. **«ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ (ք. Հրազդան,Կենտրոն թաղ., 19/40)**
5. **<<ՌԻՆՈ>> ՍՊԸ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի 27)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի. կազմակերպության գնային առաջարկում 1-ին և 2-րդ չափաբաժինների ապրանքների անվանումները չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքներիի անվանումներին:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/				
				<<ՌԻՆՈ>> ՍՊԸ	**«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ**	**<<Տուրբոլայն>> ՍՊԸ***	**«ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ**	**«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ**
1	կուտակիչ	9	270000	202500	206250	243000	285000	145485

	մարտկոցներ							
2	կուտակիչ մարտկոցներ	20	500000	325000	325000	440000	483333	423300

*** Կազմակերպությունը հանդիսանում է ԱԱՀ չվճարող**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ <<ՌԻՆՈ>> ՍՊԸ-ի և **«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի** առաջարկած գները ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար հավասար են: Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2018թ. ապրիլի 09-ին, ժամը 11:30-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝
Մեկ աշխատանքային օրում կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Ս.Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան